



# Ա Ր Ա Բ Ա Տ

ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՆԻՐԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ  
ԱՄՍԱԳԻՐ

Թ Յ Ո Ւ · Ի Ե · Տ Ա Ր Ի ·

Հ Ա Մ Մ Ա Բ Ի Վ Ե Վ Բ Ո Ւ Ք

Ա Յ Պ Ե Մ Բ Ե Ր Ե Ր 1 8 9 4 թ.

## Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ

### ՍՈՒՐԲ ԿԱՐԳԵ.

« Ա մենայն ինչ՝ որ յեկեղեցին զերկնայնոցն բերէ ցոյց օրինակի և Յավհան խմառաւէր»:

« Եգ Կենարան մեր աշտարակ յեկեղեցին որ հանէ զմեզ ի բարձունս երկնից » Ստեփ. Աբենցի:



բիստոսիւր արեամբ փրրկելով իւր հաւատացեաններին հզօր ձեռքով հաստաեց իւր փրկարանն որով նոր կարող են անհատ յարարերութեան մէջ մանել Տիրոջ հետ և իւրեանց սխալական կետնին են-

1. Յաղագս կարգաց Նկաղեցոյ. Դրագիր. Դամար 246:

թարկել Կորա սրբարար ներդործութեան: Աստուծոյ զիմութեան շողերի տակ այս կեանքն է, որ բերաւ Քրիստոս մարդկութեան համար իրեւ մի երկրային արքայութիւն: Աստուծոյ, որ Քրիստոսի շաւզով տանումէ զէպի անմահական արքայութիւնը:

Հայոց փրկարանն, որ մատակարարումէ, Աստուծոյ ողորմնաթեան շնորհներն: Հայաստանեաց Եկեղեցին է, Քրիստոսի միամիտ և միաւեզու հաւատացողների ժողովն: Հայաստանեաց կաթողիկէն, «մայր հոգեոր երկնաւոր լուսաւոր, քան թէ երկրաւոր շնչաւոր մարմնաւոր»: որ «Ճնանի և աստուածոս ունան եղականս՝ սպատկերս մաքուրս միոյն Աստուծոյ Քրիստոսի»<sup>2</sup> Այնուզ մանելիս վերածնեալ Հայը մառանումէ, առ ժամանակ իւր տոքեաց հոգսերը, զգումէ, ինքեան հաւատար իւր շրր-

1. «Նրկն և նրկնից նրկն զա հիմաւարգեալ պայծառացոյց՝ հանգիտահաւասար վերնայարե կամարին երրորդաթիւ թաղանթ խորանի, որ մին և միայնակն ընակէ եւ շըքի յանձայրութիւն ամբաւութեան Ս. Երրորդութեան: Ասմանայ նարեկացի, ներոտ ի սորը նաթուունկեցիցի ճապարադ. 1859. Էջ. 295:

2. Ս. Դրիգոր Նարեկացի. Ց. 14:

Հապատղների հետ Աստուծոյ առաջ, միշում է իւր մեղքերն և ներում իւր մօտ կանգնած ատելուն: Այս Եկեղեցումն ենք համազուռում: որ մենք եսական անհատներ չենք, այլ Աստուծոյ համայնքին և սրբոց ժողովին պատկանող անդամներ, <sup>1</sup> որնցից իւրաքանչիւրը պէտք է ըստ կարեաց աշխատի այդ համայնքի յառաջադիմութեան համար, սիրե իւր ընկերին և սիրուի նորանից, Աստուծոյ արքայութիւնն յառաջ տանէ, Աստուծոյ երախտապէտ որդի լինի՝ Կորա տուած շնորհները սրբութեամբ ընդհանրութեան օգտին զործածելով: Ծմարիտ հաւաքը մեզ միացնողն է և ծմարիտ հաւաքը մեր զենքն է՝ համարձակ զործելու և այդ փրկարանը մտնելու:

Այդպիսով մենք միանում ենք թէ իւրար և թէ մեր փառաւոր նախնեաց հետ, որմէք հոգեպէս մեզ ազօթակցում են, և մենք զօրացած նոցանով՝ շարունակում ենք մեր երկրային ճանապարհն: Կոքա, որոնց սոսի փոշին անդամ՝ թօթմափելու արժանի չենք, միանում են մեզ հետ հոգեպէս սոս սուրբ վայրում: Հաւաան է, որ կազդուրելով մեր հոգու թուլութիւնք, միացնում է ամենքիս, և թեւառուելով՝ տանում է զետիփ «Եկեղեցին անդրանիկաց»: <sup>2</sup> Կոյն հաւատով ենք շնչում և ապրում ի Քրիստոս, և մեր անդամներից սուրբերին ապացոյց ճանաչելով մեր համայնական և ազգային հաւատքի ամրութեան, ընդունուում և միանում ենք Քրիստոսի հետ, առանց որի չունինք ոչ մի փրկութիւն և ոչ մի երջանկութիւն: Ահա այդ սրբարանում աստուածութիւն և մարդկութիւն, հօգեւոր և մարմնաւոր աշխարհ՝ ստանում են պատկաւոր միութիւն և երջանկացնում երկրաբնակներիս: \*Քանզի Եկեղեցի ոչ ցուցանէ մեզ պատուիրան Աստուծոյ, որ ի քարանց և ի փայտէ իցէ շննեալ այլ զհաւատովն շննեալ զալզ

1. • Միաբանութիւն հաւատոց յամանասութ երթորդութիւն ի Ս. Վարժ՝ քաղաք ամրու է երկային զօրութեամբն պարապեալ ընակութիւն է սիրոյ Աստուծոյ և վարին գօրացն, ժողովիք ի նոսա ամենացն սրբով յանմատ օր Շութիւնն միաբնաւալ...: Յամակա: 114:

2. Երբ ԺԲ, 23:

մարդկան ի վերայ վիմին հաստատութեան: Աղա ուրիմն ճշմարիտ հաւատոն է Եկեղեցի, որ զումարէ և շննէ զմեզ ի մի միաբանութիւն զիսութեան Որդւոյն Աստուծոյ»: <sup>1</sup>

Միայն հաւատքով կարողանում ենք մասնակից լինել Հայաստանեաց Ա. Եկեղեցու փրկութութեան, սրբարար ներդործութեան և երջանկութեան: Կա իւր հաւատացողին վերածնումէ, փրկում և զաստիարակում՝ Աստուծոյ սրգեղիքը զարձնելու համար: <sup>2</sup>

Մինչդեռ «Անդրանիկաց Եկեղեցին», կամ Հայաստանեաց Ա. Եկեղեցու յաղթական անդամները յաղթել են աշխարհս և փայելում են հանգերձեացի անտիսեղծ բարիքները, փրկուող հաւատացեալները շարունակ կռուում են կեանքի խոչնդանների և փորձանքների զէմ որոնք ենուում են մեր առաջ մեր անկատարելութեան և անհմանութեան պատճառով Սոցա փրկարծուող և զաստիարակուղ օգնողն է Հոյաստանեաց Ա. Եկեղեցու շնորհագործող մարմինը:

Ահա այս շնորհագործող Եկեղեցին է, որ պէտք է պահպանէ իւր սւանդական անարատութիւնն որպէտ զի զօրաւոր լինի և կարողանայ անշեղապէս կատարել իւր առաքելահասաա զերը: Այս սկզբունքն էական հիմունքն է Եկեղեցու ուստի և ազօթում է Եկեղեցին շարունակ:

\*Ազակեցուք զամենակալն Աստուած... և վասն միայնոց, սուրբ կաթուղիէ և առաքելական Եկեղեցւոյն:

Ուրիմն Հայաստանեաց Եկեղեցին, որպէտ զի կարողանայ փրկել սրբութիւնը է և պէտք է լինի միշա՝ մի սուրբ կաթուղիէ և առաքելական:

Կա պէտք է լինի և է մի:

\*Մի կոչք Եկեղեցի՝ ոչ տեղեաւ մի, այլ

#### 1. Ս. Մահակ:

2. • Զիանը օտար եղելոց ի մօրէ կարիքէ լինել որ ծնող, կամ զայեակ լատ Պօղոսի...: Զի ծնեալը ընութեամբ սիրեն զնողակն: Խակ առ որս փոխանակ սիրոյ ատելութիւն և օտարութիւն, զի՞նչ յայ զոյ ծնանելոց զայսիական վերաբէն աստուածեղն բանին յապաշխառութիւն, կամ մուցանելոց հայրօքն ուսմամբ և երկիւի ծնառն զնոսա: Հաղիանդական էջ, 5:

միով հաւատով և յուսով կոչմանն, և միոյ  
մօր և միոյ օրախայնի ծնունդ աւազանին, և  
մի կերակուր՝ որ է աեսութիւն ասառածա-  
յին զրոց, և մի մարմին և արիւն փրկարան,  
և մի զլուխ և պսակ և զգեստ ունիմք դՔը-  
րիսառաւ ։<sup>1</sup>

Այդ միութիւնը պահանջումէ Քրիստոս 2  
բառ որում և Հոյասանեաց Եկեղեցին ձըդ-  
տումէ անխափս պահել իւր միութիւնն ըստ  
ամենայն մասանց Քրիստոսի հետ որ է Եկե-  
ղեցու զուռը հիմն ու կատարը։

Միութիւնը պէտք է լինի թէ զաւանակ ևն  
և բարոյականն թէ սաշամաննքի և արարա-  
գութեանց եւթեան և թէ շնորհարաշխու-  
թեան ու կանոնազրութեան սկզբունքների և  
թէ վարչական կարգաւորութեան մէջ թստ  
ոյսմ ոյդ բոլորը պէտք է բնաւ չհակասեն  
Հոյոց Եկեղեցու միասարք վարդապետութեան,  
այլ և եկեղեցականք պէտք է ջնոնան Ա. Հոգու-  
շնորհաց հետ համաձայն ընթանալ Հայուսպե-  
տական շնորհարեր իշխանութեան ներքոյ։

Եկեղեցին իւր բոլոր մասերով Ա. Հոգու ներ-  
գործութեան տակ է, ուրին և եթէ միու-  
թիւնը չպահպանէ որ և իցէ կերպով յան-  
ցանք արած կիմի աստուածային ներգործու-  
թեան զէմ։ Կա իւր ամբողջ ընթացքում  
պէտք է պահպանէ իւր առաքելական—Հոյ-  
րապետական աւանդականութիւնն որոշէս զի  
զրժած Ալինի իւր եւթեան։ Ուստի և Պօ-  
զս առաքեալը մինչեւ անդամ աղերսանքով է  
ասում. «Եղանակ զձել եղբարք անուանքն  
ջեսոն մերց Յիսուսի Քրիստոսի, զի զնոյն  
բան ունիցիք ամենեքեան, և մի իցեն ի ձեզ  
հերձուածք ։<sup>2</sup> Ուստի և նզովքով արգելում  
է քարոզածից զուրս բան լսել. «այլ թէ մեք,  
կամ հրեշտակ յերկնից աւետարանեացէ ձեզ  
աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզով-  
եալ լիցի ։<sup>3</sup> Եթէ որ աւետարանեացէ ձեզ  
աւելի քան զոր առելքն, նզովեալ լիցի ։<sup>4</sup> Կա

հրամայումէ բացէ ի բաց մերժել հերձուա-  
ծովներին և խորշել նոցանից, որովհետեւ նորա  
զայթակառութիւն են և պատականիչն են Քրիս-  
տոսի ճշմարիտ հօտիննես առաքեառ-  
լը մինչեւ անզամ հրամայումէ չիւրասիրել  
նոցա և ողջոյն չտալ նոցա, <sup>2</sup> որոնց նկատմամբ  
և վերջնական պատուիրաններին է. «Ապա եթէ և  
Եկեղեցոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իրրե դհե-  
թանուն և զմաքսաւոր։<sup>5</sup>

Աւետապանական այս պատուիրաններին հե-  
տեւ բով, աշխատումէ Հոյոց Եկեղեցին սերտ  
միութիւն պահել իւր ամենայն ամբողջու-  
թեամբ Քրիստոսի հետ, վասն զի միութիւնն  
է կատարելութեան նշան։<sup>6</sup> որով և խորշում  
է իւր միութիւնն զէմ զրժագներից Որովհե-  
տեւ ճշմարտութեան երկրպագուն չի կարող  
համբերաւարութեամբ չիւր հուատա-  
քըն ու ուորր զգացմանքները վիստուաղից և  
արհամարհողից։

Եւ աշա ինչպէս որ առաքելական զահա-  
կանն Ա. Գրիգոր Լուսաւորիչ բազմից հրա-  
մայումէ իւր որդոց զզոյշ լինել և չեկտուի  
իւր քարոզածից «ոչ յաջ և ոչ յահեակ»։ Նո-  
րա արժանաւոր յաջորդներն ես այդ կատա-  
րելով են պարձենում իւրեանց հուատարիմ  
և հսկանդ հօտի հետ Այսու օրինակ Կո-  
միտա Կաթողիկոսն զրումէ.<sup>7</sup> Պարսից զրան  
գումարուած ժողովում \* \* \* Շինեալ ես և  
հուատացեալ ինձ հօտի ի վերայ հիմնն առ-  
աքելոց և մարզակից և Ա. Պ. Պղիգորի կին-  
դանի մարտիրոսին Քրիստոսի և որբ ըստ  
նմանէ Ա. Հարքն, որով և մեք ոչ խոսնորեա-  
ցուք քան զասացեալ հուատաւ զուրր և  
զասաւածաշունչ հարցն՝ ոչ յաջ և ոչ յահ-  
եակ \* \* \*.

Ա. Գրիգոր Լուսաւորիչը միութիւն քարո-  
զելով, մի և նոյն ժամանակ մասնացոյց է ա-  
նում և զորա օգտակարութեան. «Ամենայն

1. Ս. Գրիգոր Տաթեւացի, զիոր Հարցմանց. էջ. 533:

2. Օովէ. Ժ. 16. Ժէ. 11:

3. Ա. Կոբնթ. Ա. 10: Եփսս. Դ. 4-6:

4. Գալ. Ա. 8:

5. Բիթ. 9. 10. Հա. Ժ. 17: Բ. Կորնթ. Ջ. 14:

6. Օովէ. Ժ. 17: 8իթ. 9. 10: Ղիզք. Հարցմանց. 540:

7. Օովէ. Ժ. 11:

8. Թուղթ ի Պարս. Գրչազիք. 58. 100:

որ քակի ի մերանոթենէ հաւատոցն և ու վարուցն, ոչ միայն հրաժեշտ լինի յերանութենէ անտի, այլև ի սպատիմ մասնի, որպէս անդամ ի մարմայ հատեալ անպիտան լինի, և կամ ուս ի ծառոց կտրեալ ի հուրբա: <sup>1</sup> Ուստի և հրամայումէ. «խզել զգմնդակացն զեկամնաւան, և վառել զէնո հակառակ չարին, և ի վայր կործանել զհակառակս արդարութեան»: <sup>2</sup>

Հաւատքը շատ շեշտեցինք, իսկ թէ ի՞նչ է հաւատքն այդ ևս մեզ ուսուցանումէ Ա. Ա. Շնորհալին:

«Հաւատոցն անուն մի է, բայց կրկին ունի զօրութիւն: Առաջին՝ դաւանութեան հաւատքն, որ է խոստվանութիւն ի Ա. Երրորդութիւն՝ զօր ընկալաւ իւրաքանչիւր ոք յաւագանէն: Երկրորդ՝ հաւատ այն է, որ զրանո զոր հողին Առորք խօսեցեալ է բերանով մարդարեիցն և առաքելոցն, և Եկեղեցոց վարդապետագրութեամբ զբու ի զիրս սուրբ զրեցին՝ չամարի առասպելս և սուսաւ այլ հաւատաց թէ ճշմարիտ են և ուզիղ այնպէս՝ որպէս թէ աչօք իւրովք տեսանէ զամենացն զեղեալան, և զինելոցն, և զօր էնն: . . . . Արդ՝ որ այսոցիկ ի բոլոր սրտէ հաւատացյ նա է՝ որ ունի հաւատ ինդանիւ Որ և ոչ երբէք յանդկնիւ կամ խորհել չարութիւն ի սրտի, կամ խօսել անիրաւութիւն բերանով, կամ զործել զմելս անձամբ իւրով: . . . . Իսկ որ բանիւ միայն ունի զառ ի յԱստուծոյ խոստվանութիւնն այլ ոչ գործով, այնպիսոյն հաւատն ասի մեռեալ»: <sup>3</sup>

Հայաստանեաց Եկեղեցու միութիւնից բըդիւումէ, և նորա սրբութիւնը: Այս սուրբ պէտք է լինի և է:

Սուրբ է կոչուում վասն զի նորա զլուխն և

3. Յամափ. էջ. 114:

2. Ցես. և Անմիայ Նարեկացի անդ. էջ. 40: , Դու ո՛վ հիմուածուաց և խոտորեց յոփածում մասնապարհն անմողդիմակաց նոցա զէն: և ախոյնամ խորտակից, և հաւատիշ յանդանակի կորսատ իւրեանց շարութեանց և արքաշութեանց: Դու ցնդելոց օգտող և ի նկնդանապատք խարդախամացն ժողովարան:

3. Ըստ՝ էջ. 19:

Հիմն Քրիստոս՝ սուրբ է. սուրբ հաւատով միանում ենք նորա հետ, Ա. միջոցներով և Ա. ճանապարհով զիմում ենք զէպի Ա. նպատակ: Ուրեմն թէ սուրբ է և թէ սրբոց և այդպէս պէտք է լինելու ապա թէ: ոչ՝ կիսախառուեր նորա միութիւնը Եթէ նորա վարդապետութեան մէջ լինի մինչեւ անդամ մի խոտոր տեսութիւնն այդով կիսախառուի թէ միութիւնն և թէ սրբութիւնը: Այսպիսով սուրբ է հիմնքըն ու զլուխը սուրբ են և նորա վարդապետութիւնն ու խորհուրդները, սուրբ է և կոչումն ուստի և նա ինքը սուրբ է կատարելապէս:

Այս պարզ յայտնուած է Պօղոս առաքեալի խօսքերի մէջ. «Քրիստոս սիրեաց զեկեղեցի և զանձն իւր մասնեաց վասն նորաւ զի զնա սրբեցէ սրբութեամբ աւազանին բանիւ, զի կացուացէ ինքն իւր յանդիման վառաւոր զեկեղեցի, զի մի ունիցի ինչ արատ կամ աղաւեցութիւն կամ այլ ինչ յայսպիսեաց: այլ զի իցէ սուրբ և անարատ»: <sup>4</sup>

Վասնորց և Հայաստանեաց Ա. Եկեղեցին պահանջնումէ՝ սուրբ զլացմանըներըն և երկիւզածութեամբ մօտենալ զէպի ինքն, որովհեակե որտեղ չկայ հաւատ և սուրբ զլացմունք, այնաեղ ամենաբարձր սրբութիւնն անդամ խաղալիք կղաւանայ: Իսկ Քրիստոս սկզբում իւր աշակերտաց հրամայեց. «Ո՞՛ ասցք զարութիւն շանց և մի արկանէք զմարդարիտ ձեր առաջի խոզաց: զի մի առ ոտն կոխեսցին զնոսա, և զարձեալ երզիծուցանիցին զձեզ»: <sup>5</sup> Սորանով արգէն միջոց տուաւ ապահովերու Եկեղեցու սրբութիւնն և հեռու պահէրու հաւատացելոց զանազան զայթակղութիւններից:

Հայաստանեաց Եկեղեցու հիմնազրութիւնն իսկ սրբութեամբ է զրուել ըստ որում և աստուածային ձայնի յայտաբարն այդ էր:

«Կաթուզիկէ Եկեղեցւոյն շնորհք Հոգուոյն և մէջ վկայելոցն և ի մէջ Քահանայութեան

ըղիսելոց է, աղբիւր մկրտութեան, լուանալ զազտ ոգւոցն մարմնովք հանդերձ։<sup>1</sup>

Այսպիսով «այս դժևաց պաշտելի անշնչառ կան Եկեղեցի տայ կեանս և մահու իշխել...»։ «Աս «ոչ բնքնակիր մեղօք զաղբանայ, եթէ ոչ ի մարդոց չարտոց և կամ՝ յանհաւատից կոփեցի»։ Եւ այդ պատճառով «ի մերոց զործոց իրթնանայ», ուստի և «զորս ըստ պատկերի Աստուծոյ եղեն», կանոնաւ խարէ»,<sup>2</sup> որպէս զի օրլուորէ նոցա ևս կրթէ, և ընդունելով՝ որդէ։

Հայաստանեայց Ա. Եկեղեցին կաթուզիկէ— Ընդհանրական է։

Այդ ընդհանրականութիւնը ծագումէ նոր միութիւնից և սրբութիւնից։ Քանի որ նա միացած է և սուրբ և Աստուծոյ հետ, և ամրող աշխարհը պէտք է անպատճառ առնա ձգտի, պարզ է ուրեմն որ ձգտելու ճանապարհն ու սրբարանը նոյնպէս ընդհանրութիւն համար է և ընդհանրութիւնն պէտք է վաղ թէ, ուշ աւետարանէ և պարփակէ իւր մէջ։ Ըստ այսից Քրիստոսի հրամանն է՝ քարոզել Աւետարանն ամենայն արարածոց, <sup>3</sup> և այդ կարոզ է անել Հայաստանեայց Եկեղեցին, քանի որ մի է և սուրբ։ Ուստուցանել՝ դաստիարակել փրկել մարդկութիւնը, իրազործել աստուածային Ա. կամքը մարդկանց մէջ—այս է Հայոց Եկեղեցու կոչումը։ Ուստի և նա իւրաւամբ կրկնումէ միշտ Քրիստոսի խօսքերն։ «Ամէն ասեմ ձեզ մինչև անցցեն երկնք և երկիր, յովո մի որ նշանախեց մի է», ոչ անցցէ յօրինացն և ի մարդկարելից, մինչև ամենայն եղիցի»։<sup>4</sup>

Հայաստանեայց Եկեղեցու միութեան սրբութեան յաւիտենականութեան և ընդհանրականութեան երաշխաւորովը նորա առաքելականութիւնն է։

1. Տեսը Ս. Խուաւորի, Ազաթ. Եջ. 437. Կազար Փարպեցին յիշումէ այդ. Եջ. 78. 87։

2. Ս. Գ. Նարեկացի. Բան. Ձեւ. Տես. Ա. Անդրեանութեան մասն Եջ. 330 . . . զայ ի ցրուալն ի սասանացական հրապուրմանէն առ ժաման միանուու յորդորմանը ի քրյա հաւաքելով գոտիթ՝ միայն մասքեալ և պատեալ միանուու և հաւաքեալ մարդու կայցին, և կամ արուեստ երկրակենցաղ զահանական ի մեջ ներգործութիւն զործարան»։

3. Մատթ. ԽԸ. 19; Մարկ. ԺԸ. 15; Յով. Ժ. 10:

4. Մատթ. ԵԸ. 18:

Հայաստանեայց Եկեղեցին առաքելական է։ Կա Ա. Թաղեան և Ա. Բարդուղիմէսով աւանդական յաջորդութեամբ է հաստատուել և Ա. Գ. Լուսաւորչի Հայրապետութեամբ ստացել իւր հիմնական կազմակերպութիւնը։ Ա. Հոգու գործունեութիւնն և Մորա շնորհաց պարզեատրութիւնն ապահովուած է նորա մէջ աւանդական առաքելական ձեռնազրութեամբ։ Այս հաստատուն է, վասն զի շնորհած է «ի վերայ հիմնան առաքելոց և մարդարելից»։<sup>4</sup> Այս գործունեայ է, կենդանի և կենդանաբար, վասն զի անշարժելի է նորա առաքելական Հայրապետուների աթոռն։

Ըստ որում՝ «Միածինն Ասոււծոյ Հոգւավի Արուգ զայ հանդերձէ, ոչ յարաշարժ հանապազափօխ, այլ մշտակառոյց հիմնամբ անսասանելեաւ զայ հաստատէ»;<sup>2</sup> Հետեւար և «Կարպը Եկեղեցւոյ հաստատուն և անշարժ եղիցին», ասումէ Ա. Ասհակ, ինչպէս որ Ա. Հոգին իւր յարաշարժ ներդործութեամբ զարդարումէ։

«Կարպը որ ի ամա՞ ոչ առժամապիւաք են, այլ յաւիտենականք, և անսանելիքս այս իմասնալիք՝ ոչ մարդկային իմացուածք, այլ աստուածային Հոգւոյն յայտնութիւնք» շեշտում է և Յովհան Խմաստասէրը։<sup>5</sup>

Ա. Հոգու յարակայ գործունեութիւնն և Եկեղեցու կարգ և օրէնքների և վարդապետութեան անփոփոխութիւնն առհաւատչեայ են, որ յաւիտենական ծամարտութեամբ կառաջնորդէ մեզ Հայոց Եկեղեցին, կիրկազործէ և կտանէ գէպի աստուածային արքայութիւն, ամենելին չշեղուելով ուղիղ ձանապարհից, «իրեւ աեղի և պատճառ փրկութեան» և ամենայն տէրունական ի մեջ ներգործութեան զործարան»։<sup>4</sup>

«Ասկ եթէ ոք ձեռն չարութեան ի վերինն արքայութիւն յանդինաբար համբանայցէ, և զիւտ ինչ մարմնաւոր և կամ հնարք մարդկայցին, և կամ արուեստ երկրակենցաղ զահանական ի մեջ ներգործութեան զործարան»։

1. Տես. Բ. 20: Ազաթ. ՁԵ.

2. Ս. Գ. Նարեկան. անդ:

3. Մատթեազ. Եջ. 13:

4. Դրիգոր Մագիստրոս. Թուղթը:

մանեալ աւտնդութիւնս առ ձեռակերտս Եկեղեցի փարկանիցին և ոչ պարզեւ առաւել կենց և ակնկալութիւն տառուածային և Հոգուոյն Արքոյ յայտնեալ լուսանուոդ նախապրաւթիւն . . . . և կամաց Վրարովին իննկաւորեալ խորհրդարան և առաքելոյ ձեռինն աջոյ բարեհանձար հիմնարկութիւն, միանդամայն առաել՝ զուռն երկնից և քաղաք Աստուծոյ կենդանւոյ և մայր կենդանեաց ազատ ի պարտեաց, և ճշգրիտ ահասկ կերպի երեակիս բանականի, իմանապին՝ խորհուրդ Հոգւոյս և շօշափելին պատկեր մարմնոյս . . . . զայնպիսի ոչ խոստովանողն մերժէ յերեսաց իւրոյ Հոյըն ամենակալ ի ձեռն Բանին իւրոյ Եակցի, բարձեալ ի նմանէ և զաւանդ շնորհի Հոգւոյն վասակցի, վակեացէ զզուռն կենացս այս առաջասահի յանդիման նորին չ:

(Ըստունակելք)

Ա. ՏԵՐ. ՄԻՔԵԼԵԱՆԻ



## ԲԱՐՈՅԱԿԱՆ

### ԶԼՇԱՑՈՂ ԱԽԱԶԱԿԻՐ.

Մի ուն ի կահելոց շարագրծացն Հայոցը զան եւ ասէք. ոչ զու եւ աքիտոս միքնան զանմա քո եւ զմազ: Պատասխանի եռ ընկերն ասասեան նմա եւ ասէ. չըրկնչբա զու ըստուծոյ զի ի նմին պատմի կաս: Եւ մեր միքամի արժանի որոց ցործեցան առնումք զանտուցման. Եւ սա ասպիրատ ինչ ոչ զործեաց: Եւ ասէ թիրոս մեծաւ զիս Յըր յորժաց զայնս արքութեամբ քով: Եւ ասէ ընա Յըր առն ամէն ամէն ասեն ցիզ: Այսօ ընդու իցշն իցշն ի պահատն ։ Դ. Կ. Թ. թ. 39-43: :



**F**իրարքը կրկին հասու այն մեծ օրն, երբ ընդհանրական եկեղեցին ամրագլ աշխարհումն երկրպատումէ խաչեցեալ Արքուոյն Աստուծոյ: Այս խաչն, որ պէտք է Յիսուսի Քրիստոսի զործն ոչնչացներ:

1. Ս. 9. Նաբեկ ընդդրանի

Նրան ամօթով ծածկելով, այս խաչն որ այս օր էլ ինչպէս Պօղոս առաքելոյ օրերում ու մանց համար զայթակղութիւն է, և անմառութիւն, այս խաչն որին աւելի ուժզին շարժումն քրիստոնէից յանցանքները քան նույտ թշնամիների յարձակութները, այս խաչը զեռ կանգնած է, և ամեն օր բարձրանումէ նույտութիւնուր երկիրներում, որոնք ենթարկուումն Յիսուս Քրիստոսին: Աս զեռ կանգնած է, որ աւեակ աշխարհին սէր և Աստուծոյ սրբութիւնն և քաղաքէ մեղաւորներին թողութիւն և ողորմութիւն, Աս զեռ կանգնած է, և չընայելով խարուսիկ արտաքին երեսյթին՝ երբեք գուցէ իրան չէր ենթարկած այնքան զզջացող սրակը և սցնակն խորը թափանցած չէր քրիստոնէից հաւաան, ինչպէս ներկայումս:

Եւ մնք, նրան շրջապատողներս, որպիսի զզացմամբ նայումն ենք նրան, յիշումն ենք արգեօք, որ զոհը զոհ է պահանջում և որ մեր մեղաւոր ընութիւնը պէտք է խաչուի Քրիստոսի հետ: Ո՞չ, քանի քանի քրիստոնէայք այսօր սրնումն ենք միայն մի ահարանի, որ ապշեցնեած Յիսուսի քաղաքութիւնն առաջ արտասուքները հետեանք չեն խոնարհութեան: Հոգիք, որոնք աւելի աշխարհոյնն են, շատ ընդունակ են հոգւոյ սցնովիս ալեկոծութեանց: Այդ լուսեական արտասուքն իւ մի ամենք ապակա չեն վառուել և այն ամենի համար որ շոշացումն է նոցա յանցաւօք սովորութիւնքը, արդ շրմունքների վերաց, որոնք յայտարարութիւնն էն Փրկչի սէրը, աել կըտնէ և ամեն թեթեամիտ խօսք, այդ սրակը պակաս անձնատուր չեն և ունացնութեան: Եւ ովզ զիաւէ, ոչ Աստուծոյ, արդեօք հենց այսաեզ, հենց այս ժամին երբ մենք խորհրդածել ենք կամանում Քրիստոսի շարժարանաց վերաց, առաջին տեղն աշխարհիս աշխարհիս ունացնութիւնը չէր բանում: Ո՞վ զիտէ, արդեօք այդ ունացնու-